ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

ք.Երևան «29» 03 2024թ № 902 Լ

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԽՈՐՀՐԴԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 12-Ի N 130 ՈՐՈՇՄԱՄԲ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԱՔՍԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՁԵՎԱԿԵՐՊԵԼԻՍ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՊԱՀԱՆՋԸ ՉԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի փետրվարի 23-ի N 263-Ն որոշման 1.1-ին կետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ.

1. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2021 թվականի նոյեմբերի 12-ի N 130 որոշմամբ նախատեսված մաքսային ընթացակարգով ձևակերպելիս Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերի օբյեկտ հանդիսացող արտադրանքի համար համապատասխանության գնահատման վերաբերյալ փաստաթղթեր ներկայացնելու պահանջը չկիրառել Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 16-ի N 1427-Ն որոշման հավելվածով հաստատված ցանկի 1-5-րդ և 7-24-րդ կետերի համար:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Էկոնոմիկայի նախարարի տեղակալի պարտականությունները կատարող Ն. Տերյանին:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, և դրա գործողությունը տարածվում է 2024 թվականի մարտի 31-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Recoverable Signature

X

Signed by: GEVORG PAPOYAN 2102870448

ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆ